

սոնց կը միացնեն Անատոլիոս և Սեբաստիանոս դուքսը, որ անոր ազգականներն են, և որ Սամարացի կընծմէ կամ Ս. Պետրոսէն քրիստոնէութիւնը ընդունելով մկրտուեցան և նահատակուեցան մարտ 20 ին: Անոնց անունները կը գտնուին հռոմէական վկայաբանութեան մէջ ուր կը կարդացուի թէ Սամարացի կիներ կարթագինէ քաղաքը քրիստոնէութեան դարձուցած է: Ըստ ոմանց այս տեղեկութիւնները կեղակարծ կը թուին (La Sainte Bible avec Commentaire. l'abbé J. A. Petit, հատ. ԺԴ. Յովհ. էջ 300):

Սեբաստ և Ս. Յովհաննէս Կարապետի զերեզմանը. — 129 ին Արիսդոպուլ և Անդիկոն՝ Հիւրկանոսի զաւակները մէկ տարի պաշարումէ յետոյ Սեբաստը գրաւեցին Սիւրիացիներէն: Գաբինիոս վերաշինեց զայն եւ Օգոստոս կայսրը յանձնեց Մեծն Հերովդէսի: Վերջինս գեղեցկացնելով նոյն քաղաքը անոր անունը դրաւ Սեբաստ, որ կը նշանակէ Օգոստոս: Այն ժամանակ հոբնակեցան հանգստեան կոչուած հռոմայեցի 6000 զինուորներ: Ասոր հակառակ, մէկ դար յետոյ Սեբաստը ամբողջութեամբ անշքացած է իր դրացի Նապուսի պատճառով (Bar. gd. էջ 336-37):

Աւետարանիչները Մատթէոս և Մարկոս, Յովհաննէս Մկրտչի գլխատումը(\*) յիշատակելէ յետոյ կը

---

(\*) (Տես, ՄՏԲ. ԺԴ. 3-12): Գրիգոր վրդ. Տաբեւացի Յովհաննէս Մկրտչի Գլխատման Բարոյին մէջ զլխատման պարագաները ըստ Աւետարանչաց յիշատակելէ յետոյ, մէջ կը բերէ Հերովդիայի եւ անոր աղջկան մահուան աւանդական գրոյցները հետեւեալ խօսքերով. «Յորժամ կամեցեալ աղջկանն նորագոյն իրս ցուցանել, ելեալ ի վերայ սառին կախաւէր. եւ ոչ հանդարտէր ֆուրն բառնալ զանհամութիւն նորա. հերձաւ սառն ի ներքոյ ոտից նորա, եւ ընկղմեաց զալիծ Տա-